«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝ ԽԱՉՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ <<ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ>> ԱՌԱՐԿԱՅԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ

ԱՌԱՐԿԱՆ՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ՄԱԴՈՅԱՆ ՆԱՒՐԱ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ԱԲՈՎՅԱՆԻ Ն. ՎԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 5

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Բովանդակություն

Ներածություն ----------էջ 4

Գլուխ 1.Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ ---------- էջ 5

Գլուխ 2.Խաչվող կամ ընդհանրական հասկացությունների արտացոլումը առարկայի

բովանդակությանմեջ.....էջ 7

Եզրակացություն էջ21

Օգտագործած գրականության ցանկ.....էջ 22

Ներածություն

Ավանդահարուստ հայ դպրոցն իր սկզբնավորման ժամանակներից եղել է ժողովրդի քաղաքական ու ազգային գոյատևման պատվարը և առաջընթացի գրավականը: Այսօր էլ շարունակաբար զարգանում ու վերափոխվում է այն՝համադրելով համաշխարհայինն ու ազգայինը:

Ինչպես գիտենք, ժամանակակից կրթակարգում շատ փոփոխություններ են կատարվել և դեռ ակնկալվում են:Դեռ իր ժամանակին Կոստան Զարյանը նկատել էր. «Մարդկային մտքի ուղղությունը փոխվել է:Նույնիսկ երեխաներինը: Այդ պատճառով էլ դպրոցներում երեխաները մաթեմատիկան անցնում են հիմա ավելի շուտ, քան մեր ժամանակ: Զարգանում է աբստրահված մտածողությունը: Այստեղից՝ արդի արվեստագետների հակումը դեպի վերացական, ընդհանրացված, զուգորդվող պատկերացումները»: Այսօր այս միտումն ավելի ընդգրկուն և ընդհանրական է դարձել անհատի մտածողունակության ձևավորման գործընթացում,որի հրամայականով ժամանակակից դպրոցում անհրաժեշտ գործոն է դառնում նյութի նորովի մատուցումը:Հանրակրթական դպրոցի ուսուցիչներն ամեն տարի մասնակցում են վերապատրաստման դասընթացների,որտեղ քննարկվում և մատուցվում են դասավանդման ժամանակակից մեթոդներ և հնարներ:Նոր մեթոդը նորովի մտածելու և գործելու հնարավորություն է տալիս մեզ: Որքան առաջընթաց, նույնքան ձև և կերպ: Եվ ուսուցչի առջև խնդիր է դրվում՝ի՞նչ սովորեցնել,ինչպե՞ս սովորեցնել,ինչու՞սովորեցնել:Յուրաքանչյուր ուսուցիչ գիտի,թե ինչ է սովորեցնելու,բայց առավել բարդ է ինչպես սովորեցնելը:

Ուսուցիչը պետք է կարողանա նոր մեթոդներն ու հնարները օգտագործել այնպես, որ նպաստի աշակերտների մտածողության զարգացմանը,ինքնուրույն և համագոր-ծակցաբար աշխատելու կարողություններ ձևավորի,ապահովի բոլոր սովորողների ներգրավվածությունը:

Լայն մտահորիզոն ձևավորելու խնդիրը սերտորեն կապված է հումանիտար առարկաների ճիշտ դասավանդման հետ:Հումանիտար մտածողությունը գործ ունի բարդ երևույթների և ոչ միանշանակ տրամաբանական կապերի հետ:Այն հաճախ գործում է համադրումների,նմանություններ փնտրելու,զուգադիպություններ գտնելու,ընդհանրացնելու,ամփոփելու,ներքին տրամաբանություն հայտնաբերելու,կշռադատելու,որոշում կայացնելու կարողությունների դաշտում:

Խաչվող հասկացությունները սերտորեն առնչվում են վերոնշյալ խնդիրների

արդյունավետ լուծմանը:

Հետևաբար անհրաժեշտ է հանգամանալից ուսումնասիրել, հետազոտել խաչվող հասկացությունները,պարզաբանել նրանց փոխկապակցումը ուսուցման գործընթացին,մասնավորաբար սույն հետազոտական աշխատանքի շրջանակներում՝ հայոց լեզվին նգրականությանը:

Հետազատվող աշխատանքի նպատակն է բացահայտել՝

- Ինչպե՞ս են խաչվող հասկացություններն օգնում սովորողին փոխկապակցելու տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքները աշխարհի ամբողջականությունն ըմբռնելու նկատառումով:
- Ի՞նչ դեր ունեն խաչվող կամ ընդհանրական հասկացությունները առարկայի դասավանդման ընթացքում:
- Ինչո՞վ են նպաստում առարկայի մատուցած նյութի յուրացմանը:

Վերոնշյալ նպատակներից բխող խնդիրներն են՝

- Ի՞նչ է խաչվող հասկացությունը:
- Ի՞նչ կապ կա խաչվողհասկացությունների նհայոց լեզվի ու գրականության միջև:

Գլուխ առաջին

ԽԱՉՎՈՂ ԿԱՄ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայոց (մայրենի) լեզվի, գրականության, հայ գրականության դասավանդումը բացառիկ դեր ունի անհատի,պետականամետ հայ քաղաքացու արժեքային համակարգի,նրա բարոյական նկարագրի ձևավորման գործում:Հայոց լեզվի և գրականության դասավանդման ընթացքում մշակվում և ամրապնդվում է այն դիրքորոշումը, որ մայրենի լեզուն՝որպես ՀՀ պետական լեզու,անկախ պետականության պահպանման,զարգացման կարևորագույն երաշխիքն է, որը անփոխարինելի դեր ունի ինչպես հենց իր՝սովորողի,այնպես էլ ողջ հայ ժողովրդի կյանքում:Սովորողը հայոց լեզվից,գրականությունից գիտելիք,որոշակի հմտություններ ձեռք բերելով հանդերձ՝ուսումնասիրում է իր մայրենիլեզուն՝որպես իր ինքնության բացահայտման և դրսևորման,որպես հաղորդակցման և համագործակցության,որպես այլ ոլորտներից գիտելիք ձեռք բերելու, օտար լեզու սովորելու անփոխարինելի միջոց: Մայրենի լեզվի,գրականության ուսումնասիրությունը ձևավորում է որոշակի վերաբերմունք և դիրքորոշում հայեցի ոգու, ազգային արմատների պահպանման և ամրապնդման համար,ինչպես նաև հնարավորություն է տալիս խորությամբ ընկալելու հայ մարդու արժեքային ըմբռնումների համակարգը, ժողովրդիկենցաղը,նիստուկացը,հավատալիքները,ավանդույթները,սովորույթները:Ազգային ոգին և մշակույթը արժևորելու,գնահատելու,պահպանելու,հաջորդ սերնդին փոխանցելու պատրաստակամությամբ և գործուն մասնակցությամբ դաստիարակվում է հայրենասեր,պետական մտածողություն ունեցող,օրինապահ,բարեկիրթ, ներդաշնակ զարգացած անձնավորություն, որը պատրաստ է սովորելու ողջ կյանքի ընթացքում՝:[1]

Արժևորելով հայոց լեզվի և գրականության դերը՝փորձենք բացահայտել խաչվող հասկացությունների կարևորությունը նյութի ուսուցման ընթացքում:

Ըստ իս՝լեզուն և գրականությունը ուսումնասիրելու ընթացքում զարգանում են սովորողի քննադատական մտածողությունը,ստեղծարարությունը,հաղորդակցվելու,

[1]Հանրակրթության «Մայրենի»,«Հայոց լեզու», «Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաներիփորձնականչափորոշիչն ծրագրեր1-12-րդդասարաններ

համագործակցելու,ցանկացած միջավայրում իրեն լիարժեքորեն դրսևորելու կարողությունները:

Այս կարողությունները զարգացնելուն կնպաստեն նաև խաչվող հասկացությունները:

Հայոց լեզվի և գրականության ուսուցման և ուսումնառության գործընթացը այլ առարկայական խմբերի ոլորտների հետ համադրելու,գիտելիքը կյանքին կապելու,դրա կիրառության տեղը ցույց տալու, աշխարհի միասնականության ըմբռնումն ապահովելու,սովորողների քննական մտածողությունը զարգացնելու համար առանձնացվել են խաչվող կամ ընդհանրական տասը հասկացություններ:

1. Օրինաչափություն
2. Պատճառ և հետևանք
3. Կառուցվածք և գործառույթ
4. Կայունություն և փոփոխություն
5. Անհատներ և հարաբերություններ
6. Ժամանակ և տարածություն
7. Անհատական և մշակութային արժեհամակարգ
8. Փոփոխություն և զարգացում
9. Էներգիա և նյութ
10. Համաշխարհայնացում

Խաչվող կամ ընդհանրական հասկացությունների ընձեռած հնարավորությունները

- Նույն երևույթները հետազոտել տարբեր տեսանկյուններից
- Ըմբռնել աշխարհի միասնականությունը և ամբողջականությունը
- Զարգացնել վերլուծական միտք և քննական մտածողություն
- Իրականացնելտարբեր նախագծեր և հետազոտական աշխատանքներ
- Նպաստել վերջնարդյունքների ապահովմանը

Գլուխերկրորդ

Խաչվող կամ ընդհանրական հասկացությունների արտացոլումը առարկայի բովանդակության մեջ

1. Օրինաչափություն





Օրինաչափությունը բնորոշ է բոլոր ոլորտներին,հանդիպում է ամենուր՝ թե՛ կանոնավոր կառուցվածքներում,թե՛ կրկնվող պատահարներում և հարաբերություններում,գիտական և լեզվական համակարգում, մշակույթի ոլորտում և այլն:Օրինաչափությունը տեսնելու և ճանաչելու առաջին քայլերից մեկը դասակարգումն է,որն իրականացվում է նմանությունների ու տարբերությունների բացահայտման

արդյունքում: Ինչն էլ նպաստում է վերլուծական,քննական մտածողության զարգացմանը:

Մարդիկ ունակ են տեսնելու և ցույց տալու օրինաչափությունները: Փոքրերը սկսում են օրինաչափություններ նկատել շատ ավելի վաղ,քան սկսում են հաճախել դպրոց:Նրանք, օրինակ, նկատում են, որ Արեգակը և Լուսինը երկնքում հայտնվում են օրվա տարբեր ժամերին:Դպրոց հաճախելիս նրանք սովորում են ճանաչել,դասակարգել դիտվող երևույթների օրինաչափությունները:Ցածր դասարաններում սովորողները կարող են ճանաչել տարվա եղանակների փոփոխության օրինաչափությունները, կարող են հետազոտել այն բնութագրիչները, որոնք թույլ են տալիս դասակարգելու բառերը ըստ կազմության,ձևաիմաստային կամ խոսքիմասայինառանձնահատկության, կենդանի-ները(օրինակ՝կաթնասուններ,ձկներ,միջատներ),բույսերը(օրինակ՝ծառեր,թփեր,խոտ), նյութերը (օրինակ՝ փայտ, քար, մետաղ, պլաստիկ): Այդ դասակարգումներն ավելի ճշգրիտ կարող են դառնալ բարձր դասարաններում,երբ սովորողները կսկսեն ուսումնասիրել դրանց փոփոխության օրինաչափությունները,օրինակ՝բույսերի աճի արագությունները տարբեր պայմաններում, բառերը ստուգաբանելու,բառեր փոխառելու և տվյալ լեզվում կիրառելու, գեղարվեստական երկերը քննելու, վերլուծելու, համադրելու գործընթացը և այլն:

Լեզվի և քերականության մեջ օրինաչափությունը դրսևորվում է նույն կանոնին ենթարկվող բառերի,բառակապակցությունների և նախադասությունների ձևով:Օրինակ՝

1. Միավանկ բառերի հոգնակին կազմվում է –եր, իսկ բազմավանկ բառերինը՝ -ներ վերջավորությամբ:[2]
2. Միայն արմատից բաղկացած բառը կոչվում էպարզ բառ:[3]
3. Միայն ենթակայից և ստորոգյալից կազմված նախադասությունը կոչվում է պարզ համառոտ նախադասություն:[4]

Դասապրոցեսին օրինաչափությունն առավել տեսանելի դարձնելու նպատակով կարելի է գործածել մի շարք հնարներ և մեթոդներ՝ Ֆրայերի մոդելը, Վենի դիագրամը,համեմատական աղյուսակները, որոնցից կընտրենք Ֆրայերի մոդելը:

[2]Հովհ.Բարսեղյան,Փ.Մեյթիխանյան,Հայոցլեզու7,էջ22:
[3]Դ.Գուրջինյան,Թ.Ալեքսանյան,Ա. ԳալստյանՄայրենի 6,էջ88:
[4]Հովհ.Բարսեղյան,Փ.Մեյթիխանյան,Հայոցլեզու8,էջ74:



Գրականության դասավանդման ընթացքում ևս ի հայտ են գալիս օրինաչափություններ:

Ինչպես գիտենք,չափածոն ունի առանձնահատուկ կառուցվածք՝ անպայման ռիթմային,շատ հաճախ՝հանգային ձևավորմամբ: Առանձնացվում են բանաստեղծական կայուն ձևեր՝ գազել, սոնետ, տրիոլետ, քառյակ, հայրեն և այլն:

Ներկայացնենք Վ.Տերյանի «Հրաժեշտի գազել» բանաստեղծությունը:

Գազելը գրվում է երկտող տներով.առաջին տան երկու տողերի մեջ կրկնվող երկրորդ կիսատողը նույնությամբ կրկնվում է հաջորդ տների երկրորդ տողերում:Կրկնվող կիսատողը խտացնում է բանաստեղծության ամբողջ իմաստը:[5]

Գազելի կառուցվածքը տեսանելի դարձնելու միտումով կիրառենք գույնի խորհրդանիշը՝ կապ հաստատելով նաև կերպարվեստ առարկայի հետ:Սովորողը նյութն ուսումնասիրելուց հետո կփորձի գունավորել կրկնվող հատվածները՝ այն տեսանելի դարձնելու նպատակով:

Ամեն վայրկյան սիրով տրտում ասում եմ ես մնաս բարով.
Բորբ արևին իմ բոց սրտում ասում եմ ես մնաս բարով:

Մնաք բարով ասում եմ ես բոլոր մարդկանց՝ չար ու բարի,
Տանջվող ու որբ Ադամորդուն ասում եմ ես մնաս բարով:

Մնաք բարով ասում եմ ես ընկերներիս՝ մոտ ու հեռու,
Ոսոխներիս՝ չար ու արթուն ասում եմ ես մնաք բարով:

[5]Դ.Գասպարյան,Գրականություն8,էջ233,234:

Երկնի մովին, կանաչ ծովին, անտառներին խոր ու մթին,
Գարնան ամպին լույս ոլորտում ասում եմ ես մնաք բարով:

Ոսկեշղթա իմ հուշերին, իմ գիշերին, իմ փշերին,
Արտույտներին ոսկի արտումասում եմ ես մնաք բարով:

Ծաղիկներին դեռ չբացված,դեռ չկիզված հոգիներին,
Մանուկներին վառ-խլրտուն ասում եմ ես մնաք բարով:

Գնում եմ ես մի մութ աշխարհ, հեռու երկիր, էլ չեմ գալու,
Բարի հիշեք ինձ ձեր սրտում,մնա՛ք բարով,մնա՛ք բարով:

Այսպիսով,մատուցվող թեման դառնում է տեսանելի և հիշվող:
Մեկ այլ եղանակով՝բանաստեղծական նյութը արձակի վերածելով,այսինքն՝ օրինաչափության խախտմամբ,կարելի է առավել ընկալելի դարձնել օրինաչափ և ոչ օրինաչափ երևույթների դրսևորումը:

2.Պատճառ և հետևանք

Բնության մեջ, մարդկանց,ազգերի հարաբերություններում,գեղարվեստական երկերում,արվեստի գործերում,երաժշտական ստեղծագործություններում մշտապես կարելի է հանդիպել այս հասկացություններին:Ամեն պատճառ հետևանք կամ հետևանքներ կարող է ունենալ:

Պատճառահետևանքային կապերի մասին ուսուցման նպատակներից մեկն այն է, որ սովորողները հետևանքները ուսումնասիրեն նույնիսկ այն դեպքերում,երբ դրանք դուրս են մարդու վերահսկողությունից:Կարևոր նպատակներից է նաև,որ սովորողները գիտական պատճառահետևանքային կապերը տարբերեն ոչ գիտականից:Սովորողները ուսումնառության արդյունքում «ինչպե՞ս դա տեղի ունեցավ»,«ինչո՞ւ դա տեղի ունեցավ»հարցերից պետք է կարողանան նշել «ի՞նչը ստիպեց, որ տեղի ունենա», «ի՞նչ պայմաններ էին դրա համար անհրաժեշտ» հարցերին:Դրանք հանդիպում են ամենուր,կանոնավոր կառուցվածքներում,կրկնվող պատահարներում և հարաբերություններում,օրինակ՝ծաղիկների,փաթիլների կառուցվածքում,տարվա եղանակների հերթագայության մեջ:

Բարձր դասարաններում սովորողները պետք է կարողանան այսօրինակ հարցերին պատասխանել իրենց հայտնի գիտական տեսությունների հիման վրա,այսինքն՝գիտական բացատրություններ տալ:Պատճառահետևանքային կապերը բացահայտելը և ըմբռնելը կարևոր են վերլուծական շարադրանքներ գրելիս:Լեզվական շատ երևույթներ նույնպես կարելի է բացատրել պատճառահետևանքային կապերով,օրինակ՝շեշտի տեղափոխման հետևանքով կատարվող հնչյունափոխությունը,լեզվական տարածված սխալները առօրյա խոսքում,հոլովական զուգաձևությունները:

Կարելի է ցանկացած ստեղծագործության,լեզվական երևույթի,ինչպես նաև բնագիտական և հասարակագիտական առարկաների տիրույթում ցույց տալ պատճառահետևանքային կապերը:

Հայոց լեզվի և գրականության մեջ կապն ուսումնասիրելու համար կարելի է կիրառել հարց ու պատասխան,ապագայի անիվ,մտքերի քարտեզագրում և այլ մեթոդներ:Օրինակ՝

1. Որմնախորշի՝սարդոստայնով պատված անկյուններից մեկում սրբապատկեր էր դրված:

   Եթե հատկացուցչի և հատկացյալի միջև ընկնում է գոյական կամ դերանուն պարունակող որոշիչ բառակապակցություն, հատկացուցչի վրա դրվում է բութ:(Կիրառելիէհարցուպատասխան մեթոդը:)[6]
2. Հրանտ Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքի հիմքը գոյամարտն է հանուն կեցության:

Նմուշ՝ Ապագայի անիվ



[6]Հովի. Բարսեղյան,Փ. .Մեյթիխանյան,Հայոց լեզու 8,էջ 98:

3.Կառուցվածք և գործառույթ



Գործառույթը կարելի է բացատրել կառուցվածքով,իսկ կառուցվածքը կարելի է բացատրել՝ ելնելով գործառույթից: Լեզվական-քերականական, բնական և արհեստական համակարգերի գործունեությունը մասերի փոխադարձ կապերով է պայմանավորված:

Օրինակ՝հայերենի նախադասության կառուցվածքի իմացությունը հնարավորություն է տալիս արտահայտելու մտքեր,այսինքն՝լեզվի շատ կարևոր գործառույթին անդրադառնալ:Կառուցվածքը էական դեր ունի գրական երկի ուսումնասիրության գործընթացում,երբ բացահայտվում է,թե ինչպես է կառուցել հեղինակը իր երկը,մասերից յուրաքանչյուրն ինչ դեր ունի հեղինակի մտքերը, որոշակի հույզեր, զգացումներ տեղ հասցնելու առումով: Ցանկացած տեքստ ունի որոշակի կառուցվածք: Աշակերտին ցույց տալով դրա մասերը և ամեն մասի դերը տեքստի կառուցվածքում՝սրա նմանությամբ նույն հասկացությունները կարելի է ցույց տալ նաև այլ առարկաների ոլորտում:Լեզուներից նրանք կարող են ուսումնասիրել, թե ինչպես են բառերը՝ որպես լեզվական միավորներ,կապվում միմյանց և կերտում որոշակի կառուցվածք՝նախադասություն:

Բարձր դասարաններում սովորողները սկսում են իրենց գիտելիքները կիրառել անծանոթ երևույթներ բացատրելու,սեփական տեքստը կազմելու համար:

Որևէ իրողության, հասկացության կառուցվածքը և գործառույթը տեսանելի դարձնելու համար կարելի է կիրառել մտքերի քարտեզագրում,մտագրոհ մեթոդները,հոսող գծապատկերը,ծառ-գծապատկերը,MindMup գործիքը և այլն:

Նմուշ՝

1. Նախադասության կառուցվածքը:

Հոսողգծապատկեր



2.Դիպաշարն ունի բաղկացուցիչ հինգ մաս՝նախադրություն,հանգույց,գործողության զարգացում,գագաթնակետ,լուծում(կարելի է պատկերել մտագրոհով):

4.Կայունություն և փոփոխություն

Բնական գիտությունների, մաթեմատիկայի, հասարակագիտության, գեղարվեստական գրականության մեջ,արվեստում կարելի է ցույց տալ, թե ինչպես են տեղի ունենում փոփոխությունները բնության մեջ, տեխնիկայում, մարդկության պատմության ընթացքում, գրական կերպարների հոգեբանության մեջ,իրականության արտացոլման զանազան ձևերում և այլն: Ամենատարբեր փոփոխությունները հանգեցնում են առաջընթացի և զարգացման:

Կայունությունը վիճակէ,որի ժամանակ համակարգի,հասարակարգի,մշակույթի տվյալ երևույթի առկայությունը համեմատաբար անփոփոխ է մնում:

Կայունությունը և փոփոխությունը կարելի է ցույց տալ տարբեր առարկաների ոլորտում:Կրկնվող երևույթները նույնպես կարելի է դիտարկել որպես կայուն վիճակ,օրինակ՝Երկրի պտույտը Արեգակի շուրջը:

Կայունության և փոփոխության քննարկումների նպատակներից մեկը կարող է լինել, թե ինչու և ինչպես է դա փոփոխվում,կամ ինչո՞ւ դա այդպես չէ: Սովորողները իրենք պետք է հանգեն այն մտքին, որ կայունությունն ու փոփոխությունը կապված են միմյանց հետ,և պետք է կարողանան ինքնուրույն բացատրել այդ կապերը:

Օրինակ՝

1.Հայերենի լեզվական համակարգը կայուն է, ունի որոշակի օրինաչափություններ,և լեզու սովորելիս մարդն օգտվում է այդ կայուն համակարգից, իսկ փոփոխությունները,բառերի ձևափոխումները օգնում են մարդուն վերադառնալու լեզվական համակարգին նգործնականումկիրառելուայն:

2. Գրական կերպարների հոգեբանության մեջ կատարվող փոփոխությունները:Կայունություն և փոփոխություն երևույթը կարելի է բացահայտել T-աձև,M-աձևաղյուսակների,քառաբաժան, գրառումների օրագիր մեթոդների միջոցով:

Նմուշ՝

Ալ. Շիրվանզադեի «Քառս» վեպում Ալիմյան եղբայրների կերպարային փոփոխությունները:

Գրառումների օրագիր

Կերպար	Մեկնաբանություն	
	Անցյալ	Ներկա
1.ՍմբատԱլիմյան	Ազատամիտ հովերով տարված երիտասարդ	նյութապաշտ բուրժուա
2.ՄիքայելԱլիմյան	«Ոսկի երիտասարդության» ներկայացուցիչ	Ազնիվ,բարոյական արժեքները արժևորող երիտասարդ

5. Անհատներ և հարաբերություններ

Մարդկային հասարակությունը կազմված է անհատներից,որոնք պատմության մեջ կարևոր դերակատարություն են ունենում,հաճախ նաև ազդում են դրա զարգացման գործընթացի վրա:Բազմաթիվ մարդիկ էլ պարզապես ապրում և արարում են:

Այս առումով կարևոր է, որ սովորողըհասկանա,թե ո՛վ է ինքը, ինչ դեր ունի այս համայնքում, և ովքեր են մենք-ը: Ինքը այդ ընդհանուրի մեջ ինչ անելիք ու գործառույթ ունի,ինչպես պիտի վերաբերվի ուրիշ մարդկանց:

Ո՞վ եմ ես:Ո՞վ ենք մենք:

Կյանք,համոզմունք,արժեհամակարգ, առողջություն,փոխհարաբերություն, մշակութային ընդհանրություն և տարբերություն,հարգանք, հանդուրժողականություն

Երբ սովորողն ուսումնասիրում է նշանավոր մարդկանց կենսագրությունները,սովորում է ճանաչել,հասկանալ ինքն իրեն և այլոց,արժևորել,հարգել իր և շրջապատողների զգացումները, աշխարհայացքը, տեսակետները: Այս ամենը կարևոր են բարոյական նկարագրի ձևավորման, բարեվարքության զարգացման համար, ինչպես նաև համագործակցային կարողությունների ձևավորման գործընթացում:

Նշանավոր անհատների կենսագրություններն ուսումնասիրելիս անհրաժեշտ է շեշտը դնել նրանց բարոյական կերպարի,հասարակության և պատմության առաջընթացն ապահովող գործունեության վրա:

Այստեղ ևս կիրառելի են որոշ հնարներ,մեթոդներ,որոնք կհեշտացնեն սովորողի աշխատանքը՝գրառումների օրագիրը,կանխագուշակումների աղյուսակը,T-աձ և աղյուսակը,զրույցի մեթոդը,բանավեճը,գրավոր և բանավոր վերլուծական շարադրանքները և այլն:

6.Ժամանակ և տարածություն

Այս հասկացություններն ուսումնասիրելիս կարևոր են որտեղ՞ և ե՞րբ հարցերը, երբ սովորողներն ուսումնառության ընթացքում ուսումնասիրում են տարբեր ժողովուրդների կենցաղը,պատմությունը որոշակի ժամանակաշրջանում և վայրում,նրանց ձեռքբերումները, քաղաքակրթության զարգացման գործընթացում ունեցած դերը,ըմբռնում են ժամանակի և տարածության կապը:

Ժամանակի և տարածության ըմբռնումը խիստ կարևոր է գրողների կենսագրությունն ու ստեղծագործական ուղին,գրական երկերը,լեզվական համակարգի շատ կարևոր իրողություններն ուսումնասիրելիս,որտեղ կարևորվում է նաև միջառարկայական կապը:

Օրինակ՝

- մակբայների՝ժամանակ,տեղ և գործողության այլ հատկանիշներ դրսևորելու առանձնահատկությունները,
- բայի խոնարհման հարացույցում ժամանակի դրսևորումները,
- հայոց լեզվի զարգացման փուլերը,
- պատմավեպերը ուսումնասիրելիս և այլն:

Որոշ դեպքերում ժամանակի և տարածության կապը խորհրդանշական արժեքով է հատկանշվում,որի բացահայտումը ավելի տպավորիչ ու հետաքրքիր է դարձնում մատուցվող նյութի բովանդակությունն ու նրանում ամփոփված գաղափարակա հարցադրումները:

Օրինակ՝ Էռ.Հեմինգուեյի «Ծերունին և ծովը» վիպակում բաց ծովում ծերունու՝եռօրյա պայքարի

հիմքում ժամանակի և տարածության թաքնախորհուրդ կապն է ընկած.լայնատարած օվկիանոսը տիեզերքի,աշխարհում մարդուն բաժին ընկած իր տեղի կերպարն է ,իսկ խորհրդանշական երեք օրը՝նրա կյանքի ժամանակը,որ նա ապրում է՝փորձություններ հաղթահարելով կյանքի իմաստին հասու դառնալու ճանապարհին:

Անհրաժեշտ է ուշադրության արժանացնել նաև մեթոդների ընտրությանը:

Կիրառելի են ծառ-գծապատկեր, մտքի քարտեզագրում, կենտրոններով աշխատանք,շրջված դասարան հնարներն ու մեթոդները:

Նմուշ՝

Ծառ-գծապատկեր



7.Անհատական և մշակութային արժեհամակարգ

Մարդն առանց հասարակության չի կարող գոյատևել,նա հասարակական էակ է:Նա մենակ չէ նամեն պահի ստեղծում է որոշակի հարաբերություններ այլոց հետ:

Այս հասկացությունն ուսումնասիրելիս սովորողները փորձում են ըմբռնել՝

- ինչ է ստեղծարարությունը.
- որոնք են նրա դերը և նպատակը.
- ինչ հիմնախնդիրների լուծումներ էառաջարկում յուրաքանչյուրի համար:

Բացահայտում են,որ մարդիկ արարում են համագործակցելով:Արժևորում են մշակույթի բարձրաժեք ստեղծագործությունները,հասկանում են դրանց գեղագիտական և բարոյական արժեքը,սովորում դրանցով հարստացնել կյա

Լեզվական հասկացություններն ու գրական երկերն ուսումնասիրելիս սովորողները ինքնուրույն եզրահանգումներ են անում, հասկանում, որ հայ լեզուն, մշակույթըհամաշ-խարհայինի անքակտելի մասն են կազմում:

Եվ արդի հնարներն ու մեթոդները օգնում են ստեղծարարության ձևավորմանն ու զարգացմանը՝հնգյակ,կենտրոններով աշխատանք,համաշխարհային սրճարան,

վարդ, փուշ,բողբոջ:

8. Փոփոխություն և զարգացում

Այս հասկացությունները կիրառելիս սովորողը պիտի փորձի հասկանալ և պատասխանել հետևյալ հարցերին՝

- ի՞նչ է փոփոխությունը,
- ի՞նչ է զարգացումը:

Շրջապատում ամեն ինչ անընդհատ նկատելի և աննկատ փոփոխությունների է ենթարկվում:Մարդը սովորում է ընդունել այդ փոփոխությունները,ավելի հաճախ՝օգուտ քաղել դրանցից, փոփոխել և բարելավել ինչպես իր,այնպես էլ համայնքի կյանքը՝հիմք դնելով նոր առաջընթացի և հասնելով զարգացման մի նոր աստիճանի:

Այս հասկացություններն ուսումնասիրելն օգնում է հասկանալու,որ մարդկային պատմության ընթացքում շատ դեպքեր, իրադարձություններ կրկնվում են: Այն նպաստում է առավել լավ ըմբռնելու՝

- լեզուների,այդ թվում՝հայոց լեզվի զարգացման փուլերը,
- լեզվի բառապաշարի հարստացման ուղիները,
- արվեստում (գրականության մեջ) ոճային ուղղությունների՝ միմյանց հաջորդելու գործընթացը և այլն:

Փոփոխություն և զարգացում հասկացություններն առարկայի բովանդակության մեջ նկատելի դարձնելու առումով կիրառելի են հետևյալ մեթոդները՝ պնդում-օժանդակում-հարցադրում,պրիզմա,հոսող գծապատկեր, կենտրոններով աշխատանքևայլն:

Նմուշ՝ Գրական մեթոդներ(հոսող գծապատկեր)



9.Էներգիա և նյութ

Այն ամենը,ինչ տեսնում ենք մեր շրջապատում,նյութ է՝կենդանի կամ անկենդան: Կենդանի նյութերը մշտապես ինքնանորոգվում են,իսկ անկենդանները միայն փոփոխվում են արտաքին ուժի ազդեցությամբ:Էներգիան նյութի հիմնական հատկություններից մեկն է,նրա շարժման չափը,հզորությունը՝տարբեր դրսևորումներով:

Նյութի և էներգիայի կապը ավելի հեշտ և տրամաբանական է պատկերացնել ու դիտարկել ֆիզիկայի,քիմիայի բնագավառներում:Բայց,որքան էլ զարմանալի է,այս երևույթների ներքին անտեսանելի կապը կարելի է տեսնել գրական ստեղծագործության հիմքում և դրա վերհանմամբ

տեսանելի դարձնել վերջինիս խորքային շերտերը,

նպաստել վերացարկված մտածողության զարգացմանը,

արժեքային կայուն համակարգի ձևավորմանը:

Դիտարկենք Վ.Տերյանի «Երկիր Նաիրի»; բանաստեղծական շարքի օրինակով: Նվարդ Թումանյանին ուղղված նամակում բանաստեղծն ասում է.Ես ինձ զգում եմ մեկը նրանցից,որոնց վիճակված է նաիրյան հոգու տառապանքը կրել:Գուցե դրա համար հարկավոր է ,որ մենք սքեմ հագնենք,լռակյաց կյանք վարենք՝օրհներգություններ հորինելով և կրոնական սրբազան խորհուրդներ կատարելով նաիրյան հոգու առջև»:

Եվ,իրոք,շարքն ընդհանրական առումով հիշեցնում է աղոթական ,հմայական գործողություն,ոգեկոչում՝հանուն ազգային վերածննդի:

Ահով ահա կանչում եմ քեզ,
Յոլա՛,ցնո՛ղք Նաիրի…

Երկիր Նաիրի կերպարը՝ որպես ազգային միավորիչ գաղափար,խորհրդանիշ,պիտի ցոլա մեր ուղեղում,մեր մտքում,առաջնորդող լույս լինի,ոգեղեն ուժ,պիտի դառնա այն էներգիան,որի հաղորդմամբ տեսիլք դարձած աննյութական Երկիր Նաիրին իրական գույներ հագնի,նյութականանա՝որպես ամուր հիմքերի վրա խարսխված երկիր-պետություն:

Այս դեպքում որպես մեթոդական հնար կարելի է կիրառել բեմականացումը՝երաժշտական և բեմական համապատասխան ձևավորմամբ:

Առհասարակ գրականության առարկան հնարավորություն է տալիս իրենից բխող մտքերը,զգացումները ծառայեցնելու որպես մղիչ ուժ,էներգիա՝նյութականացնելու անգամ ամենաանիրական գաղափարները:

10.Համաշխարհայնացում

Համաշխարհային քաղաքակրթության զարգացման բոլոր փուլերում,մարդկության վաղ տարիքից սկսած,մարդու ստեղծած համայնքները բազմաթիվ կապերով՝տնտեսական,քաղաքական,մշակութային,փոխներգործել և շարունակում են փոխազդեցություն գործել միմյանց

վրա՝ապահովելով քաղաքակրթության առաջընթացը։

Հայոց լեզուն,հայ գրականությունը այդ քաղաքակրթության մի անբաժանելի մասն են։ Մասնավորապես հայ գրականության դասավանդման ընթացքում շատ հաճախ անհնար է գրականության նյութը դիտարկել ինքնին՝որպես առանձին,ինքնաբավ երևույթ։Հետևաբար համաշխարհայնացում խաչվող հասկացությունը անհրաժեշտ գործոն է դառնում որոշ թեմաների ուսուցանման ժամանակ։

Դիտարկենք,օրինակ,գրական մեթոդներն ու ուղղությունները,որոնք համաշխարհային գրականության ընդհանրական երևույթներ են,և դրանք անցնելիս անդրադարձ է կատարվում ձևավորման միջավայրին,գործոններին,ապա վերջիններիս դրսևորմանը հայ գրողների ստեղծագործության մեջ։

Օրինակ՝ XIX դարի երկրորդ կեսին Ֆրանսիայում ձևավորված և եվրոպական մշակույթի մեջ տարածում գտած խորհրդապաշտությունը ինչպես է իր արտահայտությունը գտել հայ գրականության մեջ(Մ.Մեծարենց,Վ.Տերյան,Լ.Շանթ, Եղ.Չարենց)։

Համաշխարհայնացում հասկացության միջոցով՝

ավելի ընկալելի են դառնում հայ գրականության՝ համաշխարհայինի հետ ունեցած ընդհանուր եզրերն ու ինքնատիպ դրսևորումները,

զարգանում է համեմատական վերլուծություն,ընդհանրացումներ կատարելու կարողությունը, արժևորվում է հայ մշակոյթի դերը համաշխարհային գրականության մեջ։

Այս դեպքում արդյունավետ է դառնում Վենի դիագրամ,խճանկար,ԳՈՒՍ մեթոդների կիրառումը։

Եզրակացություն

Մեր կատարած վերլուծական համադրական աշխատանքի արդյունքում եկանք այն եզրահանգման,որ խաչվող կամ ընդհանրական հասկացությունները առանցքային գաղափարներ են, որոնք ընդհանրական են տարբեր գիտությունների համար և օգնում են սովորողներին միավորելու տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքները աշխարհի մասին ամբողջական պատկերացման շրջանակներում:

Խաչվող կամ ընդհանրական հասկացությունները հնարավորություն են տալիս՝

- նույն երևույթը դիտարկելու տարբեր տեսանկյուններից,
- ըմբռնելու աշխարհի ամբողջականությունը և միասնականությունը,
- զարգացնելու վերլուծական միտքն ու քննական մտածողությունը,
- տարբեր նախագծեր և հետազոտական աշխատանքներ իրականացնելու:

Գիտակցում ենք նաև,որ ուսուցիչն ազատ է իր գործունեության ընթացքում և իր սաների հետ աշխատելիս ունակ է գտնելու և կիրառելու միջառարկայական այլ հասկացություններ,փոխադարձ կապեր:

Չմոռանանք՝

«Դպրոցի ուսուցիչներն ունեն այնպիսի իշխանություն,որի մասին կերազեին վարչապետները»:

Ուինսթոն Չերչիլ

Օգտագործած գրականության ցանկ

1.Հանրակրթության «Մայրենի»,«Հայոց լեզու», «Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաների փորձնական չափորոշիչ և ծրագրեր 1-12-րդդասարաններ

2.Հովհ.Բարսեղյան,Փ. Մեյթիխանյան,Հայոցլեզու 7,էջ22:

3.Դ.Գուրջինյան,Թ.Ալեքսանյան,Ա.Գալստյան,Մայրենի 6,էջ 88

4.Հովհ.Բարսեղյան,Փ.Մեյթիխանյան,Հայոց լեզու 8,էջ74:

5.Դ.Գասպարյան,Գրականություն 8,էջ233,234:

6.Հովհ.Բարսեղյան,Փ.Մեյթիխանյան,Հայոց լեզու 8,էջ98:

7.Ս.Խաչատրյան,Ուսուցման արդյունավետ հնարներ

8 ՀՀ ԿԳՄՄՆ հրաման N65- Ն

9. Ռ.Զարյան,Հուշապատում,II հատոր,գլուխ «Կոստան Զարյան»

10.Վահան Տերյան.Նաիրյան հոգու բարձր տառապանքը (art365.am)